49. ՅՈԹ ԳՈՂԵՐ ԵՎ ԹԱԳԱՎՈՐԻ ԱԽՉԻԿ

Կէղնի, չէղնի թագավորըմ կէղնի, ուրեն՝ իրեք տղա ու ախ-չիկըմ։

Հ'ըմնօր գողեր կիգան կմտնին զէդոր խազինեն կթալնին, կառ-նին կէրթան, ինչ խըդար պահապան կդնե, չըն կառնա բռնի։ Էդ մարդու տղեկներ կասին.—Ըստհաղ մենք կէլնինք կէրթանք կպա-հինք։

Հ'առջին հեղ մեծ տղեն հ'էլավ գնաց, գնաց պահեց, տեսավ օր կես գիշեր էղավ, յոթ հարամի բացին զդուռ, մտան ներս. տղեն թորկեց փախավ, թալնեցին առան գացին։

Միջինեկ ախպեր հ'էլավ գնաց, էն լէ փախավ էկավ։ Պզտիկ հ'էլավ գնաց, էն լէ բանըմ չէրեց։

Էդոնց քուրն ասեց.—Հ'էսօր դորն իմն է, ըստհաղ ես կէլնիմ կէրթամ։

Հ'էլավ առավ զուր թուրն ու գնաց խազինի դռան հ'ետև հորըմ փորեց, զհող լըցեց հ'էլավ ուր չոքեր, կանավ դռան հ'ետև։ Մեկ էլ տեսավ, կես գիշեր էղավ, դռան ճըռոց էկավ. հարամիմ՝ բա-ցեց զդուռն ու մտավ ներս։ Օր մտավ ներս, զթուր թալեց զգլուխ կտրեց, հըլոնտեց զչանտակ, թալեց մըջ հորուն։ Էնդոր հ'ետև էն մեկել էկավ, զէն լէ հըմալ էրեց, վել հասըլ զվեցի գլուխ լէ կըտ-րեց, զչանդրկներ լըցեց հորու մեջ, զգլխըներ քաշեց ուր դին։ Հ'ըմնու պզտիկն էկավ, ախչիկ զթուր թալեց հ'էրսի մեկ դին տա-

բավ, հարամին թորկեց փախավ։ Ախչիկն հ'էլավ լուսուն թորկեց էկավ, ասեց.—Գացե՛ք տեսեք։

Էկան տեսան որ վեց հարամու գլուխ կտրուկ թալուկ է խաղինի դռան հ'ետև, վերցին տարան հորեցին։ Ձեն հ'ընկավ աշխարքի մեջ, թե չասիս՝ «Թագավորի ախչիկ վեց հարամու գլուխ է կտրիս։ Էդ հարամին է, կէրթա, զուր հ'էրես կկապե, կսաղցու, կէլնե ձեռքըմ թագավորական հալավ կհագնի, կիգա էդ թագավորի խաս բաղչեն կիջնի։ Լուսուն կէլնի բաղչավանչիք կտեսնան որ ձիավորըմ կա ուրանց բաղչի մեջ հ'իջուկ։

Կէրթան կասին.—Ախպե՛ր, դու ի՞նչ մարդ իս, առանց դաստուրի էկեր իս հ'իջի էդա տեխ։

Մարդն կասե.—Ձըր թագավորի հետ գործ ունիմ, գացեք ասեք Թըղ հ'իգա հ'ոդա, խոսամ ուրեն ու հ'էլնիմ էրթամ։

Կէրթան թագավորին կասին.—Թագավո՛ր ապրած, ձիավորըմ հ'իջուկ մըր բաղչի մեջ, կասե՝ «Գացեք ասեք ձըր թագավորին թըղ հ'իգա հ'ոդա, բան կասեմ ուրին, հ'էլնի էրթա»։

Թագավորն ասեց.—Էդ ի՞նչ մեծ մարդ է որ զիս կկանչե, ախըր։ Հ'էլավ էկավ, տեսավ թագավորական շորերով մարդըմ հ'իջեր է ուր ձիուց, բռներ է զուր ձին ու կանե։ Բարև տվեց, բարև առավ, հ'ընցավ վըր աթոռքին նստավ։ Ասեց.—Տղա՛, ի՞նչ կուզիս։

Ասեց.—Բան չըմ հ'ուզի, էկեր իմ զքու ախչիկ կուզիմ ընծիկ։

Թագավորն իշքեց էդ տղի քես ու քիսբաթին, ասեց.—Իմա՞լ տղեմ էղնի որ ախչիկըմ չարժե,—տվեց գնաց։

Գացին ախչկան ասին. «Ձիավորըմ էկեր է հ'իջի քու հոր բաղչեն, զքզիկ հ'ուզեց ուրեն, քու հեր ասեց՝ տվի գնաց»։

Հ'էլավ էկավ փանջարի աչքունքով իշքեց, տեսավ որ ուր հարամին է, ճանչցավ, բըլե մարդու բան չասեց։ Ասեց. «Ես զուր վեց ախպեր սպաներ իմ, ինք լէ թրղ տանե՝ զիս սպանե»։

Ջթադարուկ ուրանց տեսան, հ'էլավ տղեն առավ զուր կնիկն ու էկավ։

Էկան, շատ էկան, թե քիչ էկան, տղեն ասեց ախչկան.—Դու զիս կճանչնա՞ս։

Ախչիկն ասեց.—Հ'որի՞ չըմ ճանչնա, ֆըլան հարամեսներու ախպերն իս։

Ասեց.—Դու հ'իսնե չը՞ս վախենա։

— Չէ՛,—ասեց,—հ՚որի՞ կվախենամ, աստծով զքզիկ էնղոնց խեչ կդնիմ։

Տղեն ասեց.—Քու հոր հողու մեջն է, էնոքի հրմալ մեծ-մեծ կխոսաս։

Կէրթան քիչըմ տեխ, մեկ լէ տղեն կասե.—Ախչի՛, հ՚իսնե չը՞ս վախենա։

Ախչիկն կասե.—Հ՚որի՞ կվախենամ, ես զքու վեց ախպեր սպաներ իմ, կառնաս դու լէ սպանե ղիս, աստծով զքզիկ լէ էն-դոնց կուշտ կդնիմ։

Օրըմ, էրկու լէ կէրթան, կէլնին սարըմ։ Էդ տղի անուն լէ Բաքրի Ֆարհատ կէղնի, կբերե կապե ախչկա մեկ օտք մեկ ծառ, մեկ օտք լէ մեկ ծառ, մեկ ձեռք մեկ ծառ, մեկ ձեռք լէ մեկ ծառ, զթուր կառնե, օր հ՚ընկնի վրեն, ձիանք կկուվին, կկտրին զկյամ ուրանց, կփախնին։ Բաքրի Ֆարհատ կթողե ղախչիկն ու կընկնի ձիանու հ՚ետևեն։ Բաքրի Ֆարհատն օր կէրթա ձիաննուն, քարա-վանըմ կիդա էդ տեխեն կընցնի։ Ախչիկ յալվարմիշ-յախամիշ կէղնի քարվան բաշուն.—Քու բախտն եմ հ՚ընկի, հարամիմ՚ բերեր ղիս էդա տեխ օր մորթեր, ձիանք փախան դացին, գնաց հ՚ետև ուրանց, ղիս հարձրկեք տարեք ձըր հետ։

Քարվան բաշին է, կբերե ղախչիկ կհարձրկե, քոռ, թոբալ ու գրոոտ ձիմ՚ կեր, փալան լէ փրոբթուկ էր, կբերե դնե էդ փալնի մեջ, կկարե ու կքշե զուր քարվան կէրթա։

Հարամի բաշին է, կիդա կտեսնա օր ախչիկ չկա, կառնե շի-շըմ ուր ձեռք ու կընկնի քարվընի հ՚ետև, դե՛հ հ՚ոդա, դեհ հ՚ոնա՚ կհասնի։ Շիշ մեկ-մեկ կզարկե ձիաննու բեռներու կհանե, ախչիկ չդտնա։ Կիդա վըր էդ քոռ ձիու փալնին, կասե խոմ հ՚ոդա չպիտի էղնի, չըմ ավտընա, օր բազբկան բաշին զէդ խորոտիկ ախչիկ բիրե մտու էդա գոոտ ձիու փալնի մեջ։

Քարվան բաշին կասե.—Ախպե՛ր, ես վերին ճամբով իմ էկի, ախչիկ չըմ տեսեր ի,—հարամի բաշին կթորկե կէրթա։

Քարվան բաշին կբերե զէդ ախչիկ կէնե ուրին ախչիկ։ Իմալ կէղնի, ավուրըմ մեկ թագավորի տղեն կիդա էդ քարվան բաշու-դունով կընցնի, զէդ ախչիկ կտեսնա, կէրթա մոր կասե.—Ընծիկ էղնի ֆըլան մարդու ախչիկն է, չէղնի ֆըլան մարդու ախչիկն է։

Կէլնի կանչե զբազրկան բաշին, կտանե, կասե.—Էկո զքոռ ախչիկ տուր ընծիկ։

Քարվան բաշին կասե.—Էրթամ իմ ախչկան հարցում տեսնամ ի՞նչ կասե, սորա կիգամ քզիկ խոսք կիտամ։

Հ՝էլավ գնաց, ախչկան ասեց.—Ախչի՛, թագավորի տղեն հ՝էլեր է կանի, զքզիկ կառնե, ի՞նչ կասիս։

Ախչիկն ասեց.—Կէրթաս թագավորի տղին կասիս, իմ ախչիկ կասե. «Ընծիկ հրմալ քոշկ ու սարա մը շինե, որ դռներ պողպատ էզնին, ուր թարանճեքը յայլի չարխով բացվին ու խփվին, բակի մեշ մեկ ասլան մեկ դին կապուկ, մեկ խաբլան լէ՝ մեկ դին։ Մեկ լէ բանըմ որ կառնե բերե տուն, չուր հ՝իսնե չհարցու, չբերե տուն»։

Քարվան բաշին հ՝էլավ, էկավ թագավորի տղին ասեց։

Թագավորի տղեն ասեց.—Թե էդ է, էդի խոլայ է։

Կէլնի քոշկ ու սարեմ՝ կբերե կշինե, զդռներ պողպատ կէնե, թարանճեք մաքինով կբացվին ու կխփվին, կբերե մեկ խաբլան կկապե դռան մեկ դին, մեկ ասլան լէ՝ մեկ դին։ Ջուհաբ կճամբե ախչկան՝ «Ուր հ՝ուզածն շինեցի, զուր թադարուկ թըղ տեսնա, կիգամ կառնիմ, կիգամ»։

Վել հասըլ, կէլնի կէրթա, կառնե զուր կնիկ, կիգա։ Ավուրըմ մեկ թագավորի տղեն շուկեն կոլըրդի, կտեսնա որ մարդում՝ մեկ խալիմ՝ առեր է փեճին ու կոլըրդի, մարդու հավես կա որ թամաշա էնե։

Կառնե կբերե փանջարի տկեն կբռռա, կասե.—Ախչի՛, տես իմալ խալիմ՝ է, այնան մըր դիվնի լայեղն է, առնի՞մ։

Ախչիկ տեսնելու պես, դինա որ ուր հարամին է, էղեր է խալի, էկի, կծախվի.—Ցամա՛ն մա՛րդ, զէդ խալին իմ տուն չբերիս, բերիս՝ քզիկ կնութեն չըմ էնի։

Մարդ կդարձու կտանե կիտա տեր։ Ավուրըմ մեկ, մեկ լէ կէրթա շուկեն, կտեսնա որ ֆընճանըմ էկեր է ծախու, մարդ ուտեչուտե՝ հրմա թամաշա էնե։ Կասե. «Էդա ֆընջան ասըլ իմ հ՝ոդի խարճն է, առնիմ տանիմ»։

Կառնե կբերե, փանջարի տակ կկանի, կասե.—Կնի՛կ, տես, իմալ ֆընշանըմ է, ասըլ մըր հ՝ոդի խարճն է, առնի՞մ։

Կնիկն կասե.—Մա՛րդ, հեղրմ ասի քզիկ, դու հրմլա բաներուց լախա չունիս, ի՞նչ իս հ՝ընկի էդ բաներու հ՝ետև։ Կուզի՞ս զիս դուրս իտաս, առ ու էկո, բան չըմ ասի։

Մարդու ճար կկտրի, կտանե կիտա տերն ու կդառնա կիգա։

Կընցնի քանիմ՝ օր, օրըմ լէ կէրթա շուկեն, կտեսնա որ ճետըմ էկեր է կծախվի, մարդու պիտի որ թամաշա էնե։ Կասե. «Վալայի,

էլ իմ կնկա մոտեն չպիտի հարցում, ի՞նչ գինա, կառնիմ, տանիմ, թալիմ բակ ասլընի ու խարլընի կշտի հետ, էն օր իմ կնիկ դուրս ու ներս չէլնի մտնի, հ՚ո՞ւր պիտի տեսնա»։ Կառնե կբերե, կթալե բակ ու ինք կթորկե կէլնի վի։

Էդ օր լէ իմա՞լ կէղնի, կնկա միտք կընկնի ուր հերն ու մերն, շատ կմտածե, գլուխ կբռնե՝ չքնի, զիրկա գլուխ կդնե վըր ուր չոքին ու կնստի։ Կիշքե օր կես գիշեր էղավ, մեկըմ բացեց զդուռն ու էկավ ներս, իշքեց տեսավ օր՝ ուր հարամին։ Քաշեց զթուր, ասեց.—Զքու իրկա գլուխ կկտրիմ, էլ ճար չկա։

Կնիկ զինք թալեց վըր օտաց.—Քու բախտն իմ հ՚ընկի, զիմ իրիկ մ՚սպանի, ինչ կուզիս ընծիկ էրե։ Օր ասեց՝ «Զքու իրիկ չըս հ՚ուզի օր սպանիմ, հ՚ընկի հ՚առեջ ու էրթանք»։

Հ՚ընկավ հարամու հ՚առեջ, էկան հ՚էլան հ՚ոդից դուրս, ասեց. —Դը՛, հ՚ընցի հ՚առեջ։

Հարամին ասեց.—Դու հ՚ընկի հ՚առեջ։

Կնիկն ասեց.—Ես տարիմ՚ էկեր իմ էդա թարանճով իսկի չըմ հ՚իշեր ի, դու հ՚իշի, տեսնամ իմա՞լ կիշնիս, օր ես լէ հ՚իգամ քու հ՚ետև։

Հարամին օր զօտք թալեց. «Հավատամ, խոստովանիմ քզիկ ս. Սարդիս», ասեց ու հա՛յ-հա՛յ աքցիմ՚ էկավ միջաց ու տվեց թարանջեսներուց ցած։

Ասեց.—Ասլան բռնե, խաբլան կըտրրտե հ՚իրարուց։

Ասլան բռնեց ու խաբլան էրեց հազար կտոր. ինք լէ էրկու հոգով էր, օր զարկեց տվեց ցած, ասեց.—Մեռնիմ քզիկ բոզ ձիավոր հալվոր, իմ փորու միջուն ինչ օր էղնի, քզիկ մատաղ պիտի կտրիմ։

Լուսուն իրիկ հ՚էլավ դուրս, տեսավ օր ջանդակըմ կտրտուկ, լցուկ է բակ, դարձավ էկավ, կնկան ասեց.—Կնի՛կ, էդա ի՞նչ է։

Կնիկն ասեց.—Ես ի՞նչ գինամ ի՞նչ է, դու դինաս, ես չասի՞ քզիկ բելա հ՚իս բան չբերիս տուն, հ՚էրեկ ի՞նչ իս բելա հ՚իս բերի տուն։

Մարդն ասեց.—Ճետըմ տեսա շուկեն, առա էկա։

Կնիկն ասեց.—Ըշտա էգի քու ճետն է, հ՚իշի զքու ճետ մորթե, զմիս թալե ասլանին խաբլանին թըղ ուտին, զօսկրներ լէ վառե, փոջին տուր քամուն թըղ տանե, նոր թարիֆ էնիմ քզիկ ինչ է։

Իրիկն հ՚իշավ, մորթեց զճետ, միս տվեց ասլանին ու խաբլանին, զօսկրներ վառեց, էրեց փոջի, տվեց քամու դեմ, առավ

գնաց, դարձավ էկավ կնկան, ասեց.—Էրի՛, հըմկա պատմե տեսնամ էդ ի՞նչ էր էկավ քու գլուխ։

Կնիկն իմալ օր մենք թարիֆ էրինք, մեկիկ-մեկիկ զուր գլխու գալած իրկան թարիֆ էրեց։

Ին ամիս, ին օր, ին սահաթ, ին դախեն թըման-չթըման, էդ ախչիկն է, պառկավ, բերեց ախչիկ մը։ Ախչիկն է, մեսցավ, էղավ չորս-հինգ տարեկան, ավուրըմ մեկ գնաց հ՝աղբուր ջուր կբերեր, զփարչ լցեց, դարցավ կիգեր, տեսավ հ՝ալվորըմ վըր ճամբուն կանուկ է։

Ասեց.—Ախչի՛, գնա ասե քու մոր, ուր խոսքի տե՞րն է։

Ախչիկն դարձավ էկավ, մորն ասեց.—Նանե՛, գացի հ՝աղբուր ջուր կբերենք, լըցի զփարչ, դարցա կիգենք, հալվորըմ կանուկ էր վըր ճամբուն, ասեց. «Ախչի, գնա քու մոր ասե, ուր խոսքի տե՞րն է»։

Մերն ասեց.—Գնա՛ ասե, իմ խոսքի տերն իմ, լաո՛, դու էնդոր ախչիկն իս, դու պզտիկ էր, բերեց տվեց հ՝իս պահեցի, հմկա մեսցեր իս, էկեր է կտանե։

Ախչիկն լալ խըփվավ ու հ՝էլավ գնաց հալվորու խեչ, ասեց. —Իմ մեր կասե՝ «Ես իմ խոսքի տերն իմ, գնա էն մարդ թըղ առնե զքզիկ էրթա, դու էնդոր ախչիկն իս»։

Հալվորն ասեց.—Մադամ օր քու մեր ուր խոսքի տերն է, գնա, աստծու աչք էղնի վըր քզիկ, օր ծիծղաս՝ քու հ՝էրեսներուց վարդ ու ռեհան թափի, հ՝իլաս՝ զքու մադեն էնիս՝ բուք ու բորան էղնի, զքու գլուխ օր լվանան խաչխընին, քու գլխու ջուր օսկի ու արծաթ դառնա։

Ախչիկն դարցավ էկավ, մորն ասեց.—Հալվորն ընծիկ հըմլա ասեց, թողեց գնաց։

Ավուրըմ մեկ էգոր մեր դրեր էր տաշտի մեջ զախչկա գլուխ կլվաներ, լվաց հանեց ջրի միջեն, զջուր խաչխընեց, օր թափեր, տեսավ հ՝ըմեն պաղ օսկի ու արծաթ է, օր ծիծզեր՝ մեկ հ՝էրսեն ռեհան կթափեր, մեկ հ՝էրսեն լէ՝ վարդ, օր մեր ծեծեր զինք, հ՝իլեր՝ բուք ու բորանըմ կէներ, աստված ինք նշանց չի տա։

Ախչիկն էր, քանի գնաց ջոջցավ ու խորոտկցավ, ուրիշ թագավորիմ՝ տղա կեր, լսեց զէդ ախչկա անուն հ՝էլավ էկավ հ՝ուզեց ուրին։

Էկան օր կտանեն, ախչկա մեր հ՝էլավ զտալ դրեց ախչկա

հետ, ասեց.—Խնամի՛, դու գնա, տար զիմ ախչիկ թասլիմ էրե կեսրանց տուն ու դարցիր էկո։

Պառավն է, առավ զախչիկն ու գնաց, ուրին գեջատես ախչիկըմ լէ կեր, զէն լէ տարավ ուր հետ, օր հէլան կէրթեն, էդ պառավ բերեց էրկու հատ շոռ բաղարջ ջինեց, առավ ուր հետ ու գնաց։

Կէրթան, շատ կէրթան, քիչ կէրթան, ախչիկն կասե.—Հորքո՛ւր, ես անոթի իմ։

Հորքուր կհանե ղշոռ բաղարջ կիտա ախչկան կուտե։ Կէրթան քիչըմ տեխ, ախչիկ կծարվընա, կասե.—Հորքո՛ւր, ծարվուց մեռա, քու բախտն իմ հ՚ընկի, քիչըմ ջուր տուր խմիմ։

Հորքուրն կասե.—Լաո՛, էդա տեխ ջուր չկա։

Ախչիկն կասե.—Ըպա իմա՞լ կէղնի։

Հորքուրն կասե.—Էդա տեխ, տեխըմ կա ջուր կծախեն՝ աչքով կիտան։

Ախչիկն կասե.—Չէղավ զիմ աչք հանե, տուր, առ քիչըմ ջուր խմիմ։

Հորքուր կզարկե չախուն, ախչկա աչք կհանե, քիչըմ ջուր կիտա, կխմե։ Կէրթան քիչըմ տեխ, ախչիկ մեկ լէ կասե.—Հորքո՛ւր, ծարվըցա։

Հորքուրն կասե.—Լաո՛, էդա տեխ իս հ՚ո՞ւատեն բերիմ ջուր քղիկ։

Ախչիկն կասե.—Իմալ էղնի՝ կգտնաս բերիս։

Կէրթա քիչըմ տեխ, կօլըրդի, կդառնա կիգա, կասե.—Լաո՛, էնա տեխ մարգում՝ մոտ կա, աչքով կիտա։

Ախչիկն կասե.—Հորքո՛ւր, չէղավ զէնա մեկ աչք լէ հանե, գնա բի քիչըմ ջուր խմիմ։

Հորքուրն կզարկե չախուն, զէն աչք լէ կհանե, կբերե քիչըմ ջուր կիտա, ախչիկն կխմե։

Հորքուրն եր կտեսնա օր էլ ախչիկ չտեսնա, կասե.—Լաո՛, քզիկ աչք չկա, տանիմ թագավորի տղին ի՞նչ կասե, էկո հանե զքու հալվնիր, տուր իմ ախչիկ թրղ հագնի, տանիմ իտամ թագավորի տղին։

Ախչիկն կասե.—Դու գինաս, հրմին-հրմին ես իմ աչքերուց մահրում հ՚էլա, իմալ գինաս, հրմալ էրե։

Կբերե կհանե զախպոր ախչկա հալվներ, կհագու ուր ախչկան ու կառնե կէրթա, զախպոր ախչիկ կթողե էնտեխ։ Պառավ կտանե զուր ախչիկ կիտա թագավորի տղին։

Թագավորի տղեն կտեսնա, կասե.—Ախչի՛, դու իմ տեսած ախչիկ չես մանի։ Իմ տեսած ախչիկեն օր կծիծղեր՝ հ՝էրսներուց վարդ ու ռեհան կթափվեր։

Ախչիկն կասե.—Ճամբուց կիգամ, դադրուկ իմ ու հըմ խարիր, հալա ժումըմ թըղ մնա, տես օր ծիծղամ, իմա՞լ իմ հ՝էրսներուց վարդ ու ռեհան կթափվի։

Էդոնք թըղ մնան հոդ, մենք դառնանք քոռ ախչկա վրեն։

Ախչիկն է, օրըմ էդ սարու գլուխ կլսե, օր ձեն կիգա։ Կբոռա. «Խուրբան էդնիմ քզիկ, դու կնիկ ի՞ս, մարդ ի՞ս, հոգի կփրկիս, էկո զիս առ ու գնա»։

Դու մ՝ասի, մեկ հալվոր մարդըմ կէղնի, ուրեն լէ վեց հատ քոռ ախչիկ, հ՝ըմն օր կիգա, փետ կկտրե, շալկե տանե շուկեն ծախե, էնե զուր իդարեն։

Ախչիկ կտեսնա օր ձեն չիտա, մեկ լէ կբոռա, կասե. «Որն օր հ՝իգա, զիս ազատե տանե, շատ խեր պիտի տեսնա իմ հ՝էրսեն»։

Հալվորն կասե. «Ջայեր զիս կխարե»։

Կվերցու կասե.—Լառ՛, ես վեց քոռ ախչիկ ունիմ, իմա՞լ տանիմ զքզիկ պահիմ։

Ախչիկն կասե.—Աբո՛, զիս տար պահե՝ օրական յոթ հեղ զիմ հեր քֆրե. վեց քոռ ախչիկ ունիս, մեկ լէ՝ իս։ Հաշվե յոթ քոռ ախչիկ ունիս։ Իմ հ՝էրսեն շատ խեր պիտի տեսնաս։

Հալվորն անկաճ չէնե, կթորկե էնոր կիգա։ Ախչկներուն կասե.—Գացի սար, քոռ ախչիկըմ կեր, յալվարմիշ-յախամիշ էղավ ընծիկ, ասեց՝ «Աբո՛, տար զիս պահե, իմ հ՝էրսեն շատ խեր կտեսնաս», չբերի։ Ասի՝ «Լառ՛, վեց քոռ ախչիկ ունիմ, իմա՞լ տանիմ զքզիկ պահիմ»։

Ախչիկներ ասին.—Աբո՛, հ՝որի՞ չբերիր, ըռըզիս տվող աստվածն է, վաղ օր գացիր, ա՛ռ էկո։

Հալվորն օլոր օր հ՝էլավ գնաց սար, տեսավ օր ախչիկն ուր տեխ թալուկ է, առավ հետ էկավ։ Առավ ուր հետ օր էկավ տուն, ախչիկն հալվորի ախչկներուն ասեց.—Քուրվըտի՛ք, էդա էրկոռ ամիս իմ գլխու վրեն ջուր չլուցվեր է, վաղ քիչըմ շուր տաքցուցեք, զիմ գլուխ լվացեք։

Հալվորն հ՝էլավ լուսուն գնաց օտքըմ ջուր առավ էկավ, ախչկներ դրին տաքցուցին, բերին զէդ ախչկա գլուխ լվացին։ Օր լվացին, վերցին կթափեն, ախչիկն չթողեց, ասեց.—Խաչխընեք, սորա թափեք։

Խաչխընեցին, տեսան օր էդ ախչկա գլխու ջուր դարցավ ծիլ-օսկի։ Ըստհաղ հ'ըմնոր դախչկա գլուխ կլվանեն, հալվորն է, քանի գնաց, հ'առեշ գնաց։ Զանկընցավ, հ'էլավ ուրեն թաժա քոշկ ու սարա շինեց։ Ավուրըմ մեկ լէ էդ ախչիկ ծիծղաց, հալվորու ախչկներ տեսան օր էդ ախչկա մեկ հ'էրսեն վարդ կթափի, մեկ լէ՝ ռեհան։ Ժողվեցին, կապեցին, փունջ դրեցին թարշըրեք, հ'իրկուն-օր հալվոր դարցավ էկավ տուն, ցուցուցին։

Ախչիկն ասեց.—Արո՛, խուրբան քզիկ, բանըմ ասիմ, զիմ խոսք կէ՞նիս։

Հալվորն ասեց.—Քոռցե՞ր իմ, ըպա զքու խոսք լէ չըմ էնի։

Ասեց.—Իմ աչքեր հանդ ին թագավորի կնկա մոտ, դրուկ ին թարշրեք, հ'էլի առ ղէդա վարդ, գնա հ'ընցի թագավորի տղի դրռ-նով, ասե՝ «Վարդ կծախիմ»։ Թագավորի տղի կնիկ կտեսնա, կը-հարցու կասե՝ «Ինչո՞վ կիտաս», ասե՝ «Աչքով կիտամ»։ Կբերե կիտա զիմ աչքերն՝ առ ու էկո։

Հալվորն է, հ'էլավ զվարդեր գրեց բունկիմ՝ մեջ ու առավ գնաց։ Գնաց թագավորի տղի փանջարի տկով հ'ընցավ, բոռաց, ասեց.—Վարդ ո՞ր կառնե։

Թագավորի տղի կնիկ ըսեց.—Արի՛ վի, ես կառնիմ։

Հալվորն հ'էլավ, գնաց վի։ Թագավորի հարսն ասեց.—Ինչո՞վ կիտաս։

Հալվորն ասեց.—Աչքով կիտամ։

Թագավորի տղի կնիկն ասեց.—Ժըմնկով էրկու աչք կեր թա-լուկ մըր թարշրեք, հ'էլավ գաշեց, գտավ ու առավ էկավ։

Բերեց տվեց հալվորն, զվարդեր բոլոր լէ առավ։

Հալվորն առավ զաչքեր, դրեց ուր ջեբ, թողեց գնաց։

Թագավորի տղի կնիկն է, բերեց զէդ վարդեր քիմիսին հ'էրսի գուլկընեռուց կախեց, քիմիսին խմոր զարկեց պատ, հ'իրկուն իրիկ դարցավ էկավ տուն։ Ասեց.—Կնի՛կ, էդա ի՞նչ ծաղիկ է։

Ի՞նչ ծաղիկ է, ես ծիծղացի, հ'էրսեն թափան, չասի խարիբ իմ էնօքի օր կծիծղամ վարդ ու ռեհան չթափի թշերուցս, հ'որես բաց կանի, տես իմա՞լ հ'ըմնոր վարդ ու ռեհան թափի հ'էրսնե-ռուցս։

Հալվորն է, առավ զաչքեր, բերեց տվեց ախչկան, ախչիկն առավ դրեց զաջ աչք ճափ աչքի տեխ, ճափ աչք՝ աջ աչից տեխ, կտեսներ։ Մանցին ժում ու ժամանակըմ, հալվորուն ասեց.—Արո՛,

ես կմեռնիմ հանդե ֆըլան օր, առ զիս տար էնտեխ օր գտար, հո-
լըքիկըմ շինե, զիս դիր մեշ ու թորկե էկո։

— Ջանը՛մ, էդ հըմլա բան չէղնի։

Ախչիկն ասեց.—Աբո՛, էզած մեռած ըսել է, զորո՞վ է, հո՞րի մեռնել ապրել իմ ձե՞ռքն է։

Էղավ օր ավուր մեկըմ ախչիկ պառկավ, ասեց.—Արո՛, ես մեռա։

Հալվորն է, հ'էլավ զէդ ախչիկ առավ, տարավ էնտեխ դրեց, հոլիկըմ շինեց վրեն, նը՛ դուռ ու նը՛ երդիք թորկեց, թողեց էկավ ուր տուն։

Ավուրըմ մեկ թագավորի տղեն հ'էլավ էդ տեխրանք, ավ ու խուշի, էկավ տեսավ էդտեխ քոխքիկըմ կեր, ասեց. «Ջանըմ, ես հ'ըմնօր կիգենք էդա տեխ, էղա տեխ քոխ չըկեր, էդա ի՞նչ քոխ է, ես պիտի մտնիմ ներս, տեսնամ»։

Ջարկեց զմեկ դին բլուց, մտավ ներս, տեսավ խորոտիկ կնիկըմ պառկուկ էր, աման մեռուկ էր, ասեց. «Վալայի, մեղք լէ էղնի, ես պիտի հէլնիմ էդա կնկա հետ շնութեն էնիմ, թորկիմ էրթամ»։

Հ'էլավ կնկա հետ զուր գործ տեսավ, թորկեց, շարեց զպատ, գնաց. գնաց, թե տաս, թե տրսնուհինգ ամիսն հ'ընցավ, հ'էլավ էկավ էդ սար կօլըրդեր, էկավ էդ հոլըկին էկավ հ'ըռաստ, ասեց՝ «Պիտի էրթամ տեսնամ, իմա՞լ էղավ էդ կնիկ»։

Էկավ մտավ ներս, տեսավ օր չորս-հինգ ամսական էրեխեմ՝ մանի ձան կտոր, հըմալ սպիտակ, շըմփլուկ է էդ կնկա ծծեր ու կծծե, կնիկ լէ մեռուկ է, թալուկ է գետին։ Ասեց. «Ես դինամ, էդա էրեխեն էդա տեխ մնաց, անոթից կմեռնի, վերցում առնիմ էրթամ»։

Վերցուց առավ էկավ, տվեց կնկան, ասեց.—Պահե՛։

Կնիկն ասեց.—Ես ինչո՞վ պահիմ զէդի, ընծիկ նը՛ ծիծ կա, նը՛ բան։

Ժում ժամանակըմ պահեց։ Ավուր մեկըմ թունդիր կվառեր էր, էդ էրեխի ձեռք լէ պզտիկ խութիմ՝ կեր, թագավորի կնիկն էրեց օր առներ ձեռքեն թալեր թունդիր։ Տղեն բոռաց, ճչաց՝ չտվեց։ Թագավորի տղեն լսեց զձեն։ Ասեց.—Զէդ էրեխի ձեն հ'որի՞ կհանիք։

Կնիկն ասեց.—Ես հ'որին կհանիմ, ճիժ է, կիլա, կաթ կուզե, ընծիկ լէ չկա իտամ, կխժա ու կիլա։

Թագավորի աղեն ասեց.—Ես պիտի հ'էլնիմ առնիմ զէդ տղեն ու էրթամ մեկ լէ էն քոխ, տեսնամ էդոր մեր մեռո՞ւկ է, սա՞ղ է։

Հ'էլավ առավ, էկավ, մտավ քոխի մեջ, դրեց մոր ծծերուն օր ծծեր, էդ ձեռքի խուրթին բացվավ հըլունըմ փըրթավ հ'ընկավ էդ կնկա բերնի մեջ, հ'էլավ նստավ։

Հ'էլավ նստավ, տեսավ օր էդա ուր կնիկն է։ Ասեց.—Ախչի՛, դու վո՞րն իս։

Ախչիկն ասեց.—Հ'ո՞րի չըս ճանչնա՞, ես քու կնիկն իմ։

— Ըպա իմա՞լ էղավ օր դու էկեր իս հ'ոդի։

Մեկ-մեկ զուր գլխու դալած պատմեց թագավորի տղին։ Օր պատմեց խըլըսավ, թագավորի տղեն ասեց.—Դու մանցի հ'ոդա, հար ես էրթամ ու հ'իգամ։

Թորկեց զտղեն ու մերն, հ'էլավ էկավ տուն։ Ասեց կնկան.—Ախչի՛, ախչի, զթունդիր վառե, զմեծ պղինձ դիր վրեն, խորվում՝ կէփիմ, ճամբիմ քու հոր տուն։

Ախչիկ բերեց զմեծ պղինձ դրեց վրեն ու զթունդիր կպուց։ Եբ օր պղնձի վրեն եռք էկավ, ասեց,—Մա՛րդ, օշխարն հ'ո՞ւր է, հար ե՞ր էդա պղինձ քլքլա։

Ասեց.—Հըմկա՛ կիգա։

Էկավ վերուց զկնիկն ու խոթեց պղնձի մեջ, ասեց.—Քինե հ'էվել խորվու ո՞ր պիտի էղնի։

Նոր հ'էլավ գնաց, վերուց զուր կնիկն ու տղեն, էկավ հարսնեք բռնեց։

Յոթն օր գոլ ու զուռնեն զարկեց, ուրախութեն էրին։

Աստծուց հ'իջավ իրեք խնձոր, մեկ՝ ասողին, մեկ՝ լսողին, մեկ լէ՝ անկաճ էնողին։